ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2025թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՌԱՖԱՅԵԼ ՄԱՆՎԵԼՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն ՀԽՍՀ վաստակավոր բժիշկ, բժշկական գիտությունների դոկտոր Ռաֆայել Մանվելյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Կոմիտասի պողոտայի հ.1 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՌԱՖԱՅԵԼ ՄԱՆՎԵԼՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԽՍՀ վաստակավոր բժիշկ, բժշկական գիտությունների դոկտոր Ռաֆայել Մանվելյանը ծնվել է 1896թ. հունիսի 3-ին (Գանձակ քաղաք, ռուսական կայսրություն):

1919թ. ավարտել է Դոնի Ռոստովի Վարշավյան համալսարանի բնագիտության ֆակուլտետը: 1923թ.՝ Բաքվի համալսարանի բժշկական ֆակուլտետը:

1926-1933թթ. աշխատել է Երևանի բժշկական ինստիտուտի ներքին հիվանդությունների պրոպեդևտիկայի ամբիոնում, 1937-1973թթ.՝ վարակիչ հիվանդությունների ամբիոնի վարիչ: Գիտական աշխատանքները հիմնականում վերաբերում են աղիքային վարակի կլինիկա-համաճարակաբանական ուսումնասիրություններին: Մանվելյանը եղել է ՀԽՍՀ-ում ինֆեկցիոն ծառայության հիմնադիր և առողջապահության մինիստրության ինֆեկցիոնիստը, ՀԽՍՀ ինֆեկցիոնիստների ընկերության պատվավոր նախագահ (1973 թվականից): Պարգևատրվել է ԽՍՀՄ աշխատանքային կարմիր դրոշի և աշխատանքի վետերան շքանշաններով:

Ռաֆայել Մանվելյանը մահացել է 1978թ. ապրիլի 4-ին, Երևանում;

ՀԽՍՀ վաստակավոր բժիշկ, բժշկական գիտությունների դոկտոր Ռաֆայել Մանվելյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Կոմիտասի պողոտայի հ.1 հասցեում փակցնելու միջնորդությունը ներկայացվել է ՀՀ քաղաքացիներ Լևոն, Ռաֆայել, Վահան Մանվելյանների կողմից:

Հուշատախտակի տեղադրման ֆինանսական ծախսերը կատարվելու է ընտանիքի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ